

ՇԱՆԹԻ ԳՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ

(Համառոտ ակնարկ Յ. Ճ. ՍԻՐՈՒՆԻԻ)

Լեւոն Սեդրոսեան (Շանթ) Պոլսոյ մեջ ծնած 1869ին, իր կրթութիւնը ստացած է Էջմիածնի Գէօրգեան ճեմարանին⁷ մէջ: Նուիրուելով ուսուցչական ասպարէզին, Շանթ մէկ տարի պաշտօնավարած է Կովկասի մէջ: Յետոյ Եւրոպա գացած է համալսարանական կրթութիւն ստանալու, ուրկէ վերադարձած է Կովկաս: Սահմանադրութեան հռչակումէն⁸ ետք Շանթ դարձած է Պոլիս՝ իր ուսուցչական եւ մանկավարժական գործունէութիւնը շարունակելու:

Շանթի գրական գործունէութիւնը կը սկսի բանաստեղծութեամբ: 1891-1893 գրած է քառասունի չափ քերթուածներ, յետոյ ամփոփուած *Երգեր*⁹ խորագրին տակ: Ունի նաեւ փօէմ մը՝ *Լեռան աղօղիկը*¹⁰:

Երկրորդ գիծը Շանթի գրական գործունէութեան մէջ իր վէպերն են: Յաջորդաբար գրած եւ հրատարակած է *Երազ օրեր*¹¹, *Դուրսեցիներ*¹², *Վերժին*¹³, *Դարձ*¹⁴, *Դերասանուհին*¹⁵ եւ *Կինը*¹⁶ վեպերը:

Շանթ յետոյ անցնելով գրական ուրիշ սեռի մը սկսած է թատերախաղեր գրել: Նախ գրած է *Եսի մարդը*¹⁷, եւ յետոյ, յաջորդաբար *Ուրիշին համար*¹⁸, *Ճամբուն վրայ*¹⁹ եւ վերջապէս *Հին աստուածները*:

Հին աստուածները 1909ին Երեւանի մէջ գրուած, 1912ին տպագրուած է Պոլսոյ մէջ: Նոյն տարւոյ վերջը առաջին մրցանակի արժանացած է Թիֆլիսի Հայոց Դրամատիկական ընկերութեան²⁰ կողմէ, եւ 1913ի սկիզբը տասնեակներով անգամ ներկայացուած է Թիֆլիսի եւ Պաքուի բեմերուն վրայ: Բացի հայ եւ ռուս մամուլին մէջ նոյն թատերախաղին նուիրուած բազմաթիւ գրախօսականներէն եւ յօդուածաշարքերէն, թէ Թիֆլիսի եւ թէ Պաքուի մէջ *Հին աստուածներու* շուրջ տեղի ունեցան, հայերէն եւ ռուսերէն